ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ՀԵՌԱԿԱ ՆԻՍՏԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ

ք. Երևան **«26» հունվարի 2026 թ.**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 19-րդ կետը և Խորհրդի նախագահի 2026 թվականի հունվարի 22-ի N 1-Լ որոշումը՝ Տեսչական մարմնի Խորհրդի հերթական նիստը որոշվել է անցկացնել հեռակա էլեկտրոնային քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2026 թվականի հունվարի 26-ին՝ ժամը 9:00-ին և ավարտվել՝ ժամը 17:00-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Խորհրդի նախագահ՝

Ժ. Անդրեասյան – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Խորհրդի անդամներ՝

Տ. Հակոբյան – Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ

Ա. Ավետյան – Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Օ. Աբրահամյան – Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ

Վ. Սիրունյան – Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ

Ա. Բաղդասարյան – «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի անդամ

Բ. Փափազյան – «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ա. Բախշյան – «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական

Ա. Հակոբյան – «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն

ՕՐԱԿԱՐԳ

1. Տեսչական մարմնի գործունեության 2025 թվականի տարեկան հաշվետվությանը հավանություն տալու մասին:
2. Տեսչական մարմնի 2025 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը հաստատման ներկայացնելու մասին:

Օրակարգային հարցերի քվեարկության վերաբերյալ անհրաժեշտ նյութերն ուղարկվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում՝

1. Ժ. Անդրեասյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
2. Տ. Հակոբյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
3. Ա. Ավետյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
4. Օ. Աբրահամյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
5. Վ. Սիրունյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
6. Ա. Բաղդասարյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
7. Բ. Փափազյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
8. Ա. Բախշյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
9. Ա. Հակոբյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»:

Քվեարկության արդյունքները՝

Օրակարգի առաջին և երկրորդ հարցերի վերաբերյալ՝ 9 «կողմ»:

Այսպիսով, Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկության նիստին մասնակցած 9 անդամներից 9-ը օրակարգի առաջին և երկրորդ հարցերին «կողմ» են քվեարկել:

Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Տեսչական մարմնի գործունեության 2025 թվականի տարեկան հաշվետվությանը:
2. Հաստատել Տեսչական մարմնի 2025 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

1/30/2026

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Խորհրդի նախագահ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

_____ **Ժ. Անդրեասյան**

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝ _____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն